# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
22, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆԻՍԻ 2017թվականի N 56

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝ *որոշում եմ.*

1.Նոր Երզնկա համայնքի 20-րդ փողոցի 9 տան բնակիչ՝ հանգուցյալ Սարգիս Նորեյանի և 1-ին փողոցի 4 տան բնակչուհի՝ հանգուցյալ Անահիտ Հովհաննիսյանի ընտանիքներին տրամադրել ֆինանսական օգնություն 60000 (վաթսուն հազար) դրամի չափով համապատասխանաբար.
1.1 Սարգիս Նորեյանի ընտանիքին - 30000 (երեսուն հազար) դրամ
1.2 Անահիտ Հովհաննիսյանի ընտանիքին - 30000 (երեսուն հազար) դրամ
2. Հանձնարարել գլխավոր մասնագետ Հ. Նազարյանին բյուջեի համապատասխան հոդվածից կատարել վճարում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20__ թ. ______________
գ.Նոր Երզնկա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՀՈՒՆԻՍԻ 2017թվականի N 57

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները, ինչպես նաև ՀՀ Կոտայքի մարզպետարան պետական կառավարչական հիմնարկի աշխատակազմի ղեկավար Լևոն Պետրոսյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Բավարարել ՀՀ Կոտայքի մարզպետարան պետական կառավարչական հիմնարկի աշխատակազմի ղեկավար Լևոն Պետրոսյանի դիմումը և թույլատրել Նոր Երզնկա համայնքի 8-րդ փողոց հասցեում իրականացնել ասֆալտապատման շինարարական աշխատանքներ:
2. Հանձնարարել Նոր Երզնկա համայնքի համայնքապետարանի գլխավոր մասնագետ Լ. Խուրշուդյանին նախապատրաստել և համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհրաժեշտ փաստաթղթեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. ______________
գ.Նոր Երզնկա